ԹԵՈԴՈՐՈՍ ՄՈՊՍՈՒԵՍՏԱՑԻՆ ԻԲՐԵՎ ԱՆՏԻՈՔՅԱՆ ԴՊՐՈՑԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հոդվածը Անտիոքյան դպրոցի նշանավոր աստվածաբան Թեոդորոս Մոպսուեստացու աստվածաբանությունը վերլուծելու մի փորձ է: Նրա աստվածաբանական գաղափարների և մտքերի ազդեցությունը հսկայական է իր ժամանակի և հետագա ժամանակների աստվածաբանական դպրոցների վրա: Նրա աստվածաբանության մարդաբանական կողմը կարևոր դեր է խաղացել եկեղեցու աստվածաբանական մտքի ձևավորման գործում:

Հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես է անտիոքյան աստվածաբանության դպրոցն իր մեկնաբանական մեթոդով հակադրվում Ալեքսանդրյան աստվածաբանական դպրոցին: Թեոդորոսը քննադատում է Աստվածաշնչի մեկնաբանության Ալեքսանդրյան մոտեցումը և այն հասկանում է անտիոքյան մեթոդաբանությամբ: Հեղինակն ապացուցում է, որ չնայած Թեոդորոս Մոպսուեստացու աստվածաբանությունը քննադատվել է, այնուամենայնիվ նրա աստվածաբանությունը կարևոր դեր է ունեցել ընդհանրական քրիստոնեական եկեղեցու աստվածաբանության ձևավորման գործում:

Բանալի բառեր – Թեոդորոս Մոպսուեստացի, քրիստոսաբանություն, Անտիոք, բնություն, էություն, համագոյ, փրկչաբանություն, Բան, Շնորհ:

Եկեղեցական և աստվածաբանական մտքի պատմությունը մինչև XIX դար գրեթե անդրադարձ չէր կատարել քրիստոնեության պատմության մեջ ազդեցիկ դեր և մեծ ներդրում ունեցած անտիոքյան աստվածաբանության կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Թեոդորոս Մոպսուեստացու գործունեությանն ու գրական ժառանգությանը[1]: Բանադրված լինելով 553 թ. Կոս-

---

[1] Թեոդորոս Մոպսուեստացին (350-428 թթ.) ծնվել է Անտիոքում: Լինելով ունևոր ընտանիքի զավակ՝ նա կրթություն է ստացել ժամանակի էլիտար հռետորական դպրոցներից մեկում, որտեղ նրա դասընկերներից է եղել Հովհան Ոսկեբերանը: Ուսումն ավարտելուց հետո նա մտել է վանք՝ աշակերտելով անտիոքյան դպրոցի հիմնադիրներից մեկին՝ Դիոդորոս Տարսոնացուն, որը մեծ ազդեցություն է ունեցել նրա աստվածաբանական հայացքների ձևավորման գործում: Աղբյուրների վկայությամբ ամուսնանալու նպատակով նա կարճ ժամանակ անց լքում է վանքը, սակայն անսալով Հովհան Ոսկեբերանին՝ վերադառնում է եկեղեցի: Նա ականատեսն է 370-ական թթ. Անտիոքում արիոսականների գաղափարախոսության պատճառով առաջացած խառնաշփոթին: 381 թ. Կոստանդնուպոլսի տիեզերաժողովից հետո՝ երկու տարի անց, նա ձեռնադրվում է քահանա, իսկ 392 թ.՝ եպիսկոպոս: «Մարմնավորման մասին» հիմնարար աշխատության հրատարակումը մեծ հեղինակություն է բերել Թեոդորոսին, որից հետո մակեդոնականների (հոգեմարտների) դեմ պայքարում նրան է վստահվել ներկայացնելու Ս. Հոգու մասին Անտիոքյան դպրոցի ուսմունքը: Նրա քարոզները մեծ տպավորություն են գործել ժամա-

տանդնուպոլսի տիեզերական ժողովի կողմից՝ բնական է ենթադրել, որ պատմության ընթացքում նրա աշխատանքները ևս կարող էին ոչնչացվել, ինչը քրիստոնեության պատմության վաղ փուլում բնորոշ է եղել եկեղեցու կողմից բոլոր մերժվածների գրական ժառանգության նկատմամբ[2]: Պետք է փաստել նաև, որ Թեոդորոս Մոպսուեստացու նկատմամբ եկեղեցական հայրերի անհանդուրժողականությունն ու ատելությունը գալիս էր նաև նրանից, որ նա համարվել է Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք «Նեստորի քրիստոսաբանական հայացքների հայրը և ուսուցիչը»: Այդ ամենին պետք է ավելացնել նաև այն, որ 553 թ. Կոստանդնուպոլսի «տիեզերաժողովի» ժամանակ Թեոդորոսի անունը կապվեց հերետիկոս հռչակված Պելագեոսի անվանը, ինչը, սակայն, տրամաբանության տեսանկյունից չի կարելի հիմնավորված համարել[3]: Ավելորդ չենք համարում նշել նաև, որ Թեոդորոս Մոպսուեստացուն քննադատող առաջին գրական հուշարձաններից մեկը հայոց Սահակ Պարթև կաթողիկոսի պատասխան նամակն է Կոստանդնուպոլսի Պրոկղ պատրիարքին: Այս տեսանկյունից պետք է նշել, որ Թեոդորոս եպիսկոպոսն ակտիվ դերակատարություն է ունեցել ոչ միայն իր դարաշրջանում, այլև հետագայի եկեղեցական հարաբերությունների վրա, հատկապես քրիստոսաբանական վիճաբանությունների ոլորտում:

Եկեղեցական պատմությունը վկայում է, որ վաղ շրջանի աստվածաբանական մտքի, քրիստոնեական գաղափարախոսության ու բարոյական ըմբռ-

---

նակակիցների և հատկապես Թեոդոսիոս I և II կայսրերի վրա: Հականեստորական քարոզիչները պնդում են նաև, որ Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռն ստանձնելուց առաջ Նեստորն այցելել է «ուսուցիչների ուսուցիչ» Թեոդորոս Մոպսուեստացուն: Այդ ամենի մանրամասները տե՛ս **McLeod F. G.** Theodore of Mopsuestia. London, 2009, p. 3-16:

[2] Պետք է նշել, որ Թեոդորոս Մոպսուեստացու աշխատանքների վերհանման գործում մեծապես օգնել են նրա քննադատների ու հակառակորդների աշխատությունները, որի հիման վրա ժամանակակից գիտնականները փորձում են արժևորել նրա աշխարհայացքը: «Թշնամական» այդ աղբյուրների շարքում պետք է նշել Կյուրեղ Ալեքսանդրացու «Constitutum Vigilii» և «Contra Diodorum et Theodorum» աշխատությունները, որոնք պահպանվել են Սևիրոս Անտիոքացու աշխատություններում, ինչպես նաև Ղևոնդիոս Բյուզանդացու «Contra Nestorianos et Eutychianos» աշխատանքը: Պետք է փաստել նաև, որ Թեոդորոս Մոպսուեստացուն վերագրվող ասորական տեքստերը (մասնավորապես Սաղմոսների, Պողոսի թղթերի Հովհաննու Ավետարանի մեկնությունները) թույլ են տալիս օբյեկտիվորեն ու չեզոք դիրքերից մոտենալ նրա աստվածաբանական ժառանգության քննական արժևորմանը:

[3] Տե՛ս **Greer R.** Theodore of Mopsuestia: exegete and theologian. London, 1961, p. 31:

նումների վրա մեծ ազդեցություն են գործել հատկապես պլատոնականությունն ու ստոիկները: Այդ ազդեցությունից զերծ չի մնացել նաև Թեոդորոս Մոպսուեստացու աստվածաբանությունը, թեև նա սեփական մոտեցումներն է առաջադրել մարդու, աշխարհի, արարչագործության և աստվածաբանական այլ ըմբռնումների վերաբերյալ: «Ծննդոց» գրքի մեկնության գործում Թեոդորոսն այլ կերպ է մեկնաբանում մարդու նկատմամբ պլատոնական մոտեցումը և շեշտադրում է հատկապես մարդու բարոյական ազատության և բանականության դերը, ինչը հակադրվում էր մահկանացու մարմնի, անմահ հոգու և աստվածային բանականության մասնիկը կրող մարդու պլատոնական տեսակետին: Մյուս կողմից, աստվածաբանը պնդում է, որ Աստված մարդուն ընձեռել է սխալվելու հավանականություն, որպեսզի մահկանացու և անկյալ վիճակից նրան դեպի անմահություն տանի[4]: Չնայած աստվածաբանության տարբեր ոլորտներում Թեոդորոսի զգալի ներդրմանը, այնուամենայնիվ, պետք է նշել, որ եկեղեցու պատմության մեջ նրա անունը մեկընդմիշտ մնացել է իր քրիստոսաբանական յուրօրինակ մոտեցումների պատճառով: Այդ տեսանկյունից նպատակահարմար է անդրադառնալ նրա քրիստոսաբանական հայացքների վերլուծությանը:

Թեոդորոս Մոպսուեստացու քրիստոսաբանական հայացքներն առավել խորությամբ ըմբռնելու համար առաջին հերթին հարկ է ընդհանուր գծերով ներկայացնել Քրիստոսի մարդկային և աստվածային բնությունների փոխհարաբերության ալեքսանդրիական և անտիոքյան մոտեցումների սկզբունքային տարբերությունները:

Ալեքսանդրիական քրիստոսաբանությունն ամբողջացել է հակաարիոսական պայքարի շրջանում և Աստված Բանի ու Քրիստոսի մարդկային բնությունները ներկայացրել անխառն և անբաժանելի մեկության տեսքով: Այն լիովին հակադրվել է անտիոքյան աստվածաբանությանը, քանի որ վերջինս Քրիստոսի մարդկային բնությունը որակել է որպես անկախությամբ ու ինքնությամբ բնութագրվող անկախ սուբստանց: Դրա համար էլ ալեքսանդրիացիների կողմից Աստված Բանին մարդկային գործողություն և տառապանք վերագրելն Անտիոքյան դպրոցի կողմից որակվել է որպես ապոլինարականություն: Անտիոքացիների համար անառարկելի է եղել, որ անձնավորումից հետո իբրև սուբստանց Քրիստոսի մարդկային բնությունը պահպանում է իր

[4] Տե՛ս Commentarius in Genesis // **Migne J.-P**. Patrologia Graeca. Paris, 1964, vol. 66, p. 633AB:

ինքնությունը, որի պատճառով աստվածային բնության հետ վերջինիս «ձուլումը» կամ «միավորումը» սկզբունքորեն անընդունելի է համարվել:

Պետք է նկատել նաև, որ աստվածաբանական մրցակից դպրոցներն իրենց տեսակետը հիմնավորելու համար առաջին պլան են մղել փրկչաբանական (սոտերոլոգիական) հարցերը և իրենց ճշմարտացիությունը փորձել են ապացուցել հենց այդ դիրքերից: Եվ եթե ալեքսանդրիացիները փրկության և քավության իրենց ուսմունքը բացատրել են Բանի և մարմնավորված Քրիստոսի մեկ բնության ուսմունքի դիրքերից, ապա անտիոքացիների համար այդ մոտեցումը լիովին անընդունելի է եղել: Նրանք Քրիստոսի աստվածային և մարդկային բնություններին վերագրել են անկախ սուբյեկտիվ որակներ և դրանք դիտարկել են տարբեր հարթությունների մեջ: Հենց այդ առանձնացման մեջ անտիոքյան քրիստոսաբանության հիմնախնդիրը[5]:

Այս տեսանկյունից Թեոդորոս Մոպսուեստացու աստվածաբանական ժառանգության մեջ առանձնակի կարևորություն է ներկայացնում այն, թե նա ինչպես էր մեկնաբանում Քրիստոսի երկու բնությունների և մարդկային ու աստվածային ինքնագո սուբյեկտների միության կամ փոխհարաբերության հարցը: Աստվածաբանի համար հստակ էր, որ Աստվածային Բանը Սուրբ Երրորդության երեք հիպոստասներից մեկն է, և որ Բանը համագոյ (homousius) է Աստծուն[6]: Նա վստահ է նաև, որ մարմնավորումը տեղի է ունեցել Աստված Բանի նախաձեռնության արդյունքում, քանի որ միայն աստվածային շնորհի միջոցով կարող էր հնարավոր և իրական դառնալ Մարմնավորումը: «Հիսուսը մարդ էր բոլոր մարդկանց նման և որևէ կերպ նրանցից չէր տարբերվում, քան որ բոլոր մարդիկ նույն բնությունից էին, ինչ ինքը: Եվ, իրապես, Աստված շնորհ արեց նրանց բոլորին, սակայն այդ շնորհը չփոխեց մարդու բնությունը: Եվ միայն մահվանը հաղթելուց հետո Աստված տվեց բոլորի անունները

---

[5] Հարկ ենք համարում նշել, որ Թեոդորոս Մոպսուեստացու քրիստոսաբանությունը զգալիորեն ազդվել է իր ուսուցիչ Դիոդորոս Տարսոնացու և, հնարավոր է, ավելի վաղ շրջանում ապրած Պողոս Սամոսատցու, Լուկիանոսի, Եվստաթեոսի և Թեոփիլոսի հայացքներից: Իրականում նաև հայտնի չէ, թե գոյություն ունեցե՞լ է արդյոք ինստիտուցիոնալ Անտիոքյան դպրոց, ինչպիսին էր, ասենք, Ալեքսանդրիայի կատեխետիկ դպրոցը: Սակայն մի բան ակներև է, որ Անտիոքում եղել է բավականին զարգացած աստվածաբանական ավանդույթ, որն էլ, հնարավոր է, եկեղեցական պատմության մեջ դպրոցի համարում է ստացել:

[6] Տե՛ս **Teodore of Mopsuestia**. Catechetical commentary on the Nicene Creed (ed. Mingana A., Woodbrooke Studies V). Cambridge, 1932, p. 45:

գերազանցող անունը (Քրիստոս)»[7]: Սրանով հանդերձ նա նշում է, որ Հիսուսին աստվածայինի մակարդակ բարձրացնողը ոչ թե միայն Աստվածային Շնորհն է, այլև հարությամբ տեղի ունեցած Աստվածային գործողությունը:

Թեոդորոսյան քրիստոսաբանության համաձայն՝ չնայած այն բանին, որ Հիսուսին պետք է պաշտել Աստված Բանի հետ միաժամանակ, այդուհանդերձ չպետք է մոռանալ, որ նա պահպանում է մարդկային բնության հետ ունեցած իր համագոյությունը: Միաժամանակ, ըստ Թեոդորոսի, լինելով Աստվածային Շնորհ տվողը և միաժամանակ ընդունողը, այն ոչնչով չի ազդում Քրիստոսի աստվածային և մարդկային բնությունների տարբերության վրա: Այսպիսով, ըստ Թեոդորոսի, շնորհը և ազատությունը համարվում են այն երկու որակները, որոնց միջոցով հնարավոր և իրական է դառնում Քրիստոսի մեջ մարդկայինի և աստվածայինի համագործակցության բնույթի նկարագրությունը[8]: Եվ չնայած այն բանին, որ աստվածաբանը Հիսուս Քրիստոսի մարմնավորման գործում առաջնային է համարում Աստվածային Շնորհի վարդապետությունը, սակայն միևնույն ժամանակ մեծ կարևորություն է տալիս նաև «մարդու ազատ կամքով ճիշտ ընտրություն կատարելու հնարավորությանը»: Դրանով նա մարդկային բնության նկատմամբ ամենևին էլ չի նսեմացնում Աստվածային Շնորհի առավելությունը, այլ պարզապես մատնանշում է, որ միայն շնորհի ազդեցության ու միջամտության շնորհիվ է հնարավոր մարդու կողմից ճիշտ ընտրություն կատարելու հնարավորությունը: Մոպսուեստիայի եպիսկոպոսը պնդում է նաև, որ Աստվածային Շնորհը Հիսուսին տրվել է առանձնահատուկ եղանակով, քանի որ Աստված ամեն ինչ կանխատեսել է, և Հիսուսի մարմնավորումն ու հարությունը տեղի են ունեցել ըստ աստվածային նախագծած ծրագրի: Իսկ դրանից հետևում է, որ առանց Աստված Բանի էներգիայի և ուժի անհնար է պատկերացնել Հիսուս Քրիստոսի փրկչարար առաքելության իրականացումը:

Թեոդորոս Մոպսուեստացու քրիստոսաբանությունն աչքի է ընկնում նաև նորարարական մոտեցումներով և ամենևին էլ չի սահմանափակում միայն աստվածաբանության մեջ շրջանառվող ավանդական եզրույթներով ու հասկացություններով: Փաստ է, որ անձնավորման համատեքստում նա շեշտում է մարդկային բնության բարոյական ազատությունը: Սակայն իր եզրա-

---

[7] Մեջբերումն ըստ **Greer R.** Theodore of Mopsuestia: exegete and theologian, p. 51:

[8] Տե՛ս **Teodore of Mopsuestia.** Catechetical commentary on the Nicene Creed (ed. Mingana A., Woodbrooke Studies V), p. 60:

հանգումներում ոչ մի կերպ չի ընդունում, թե մարդկայինը կարող է առանձին լինել Աստված Լոգոսից կամ գործել լիովին անկախության մեջ[9]: Այդ համատեքստում կարելի է պնդել, որ Թեոդորոսի քրիստոսաբանության շնորհիվ անտիոքյան դոգմատիկական պատկերացումներում առավել ամբողջական տեսք ստացան մարդու և մարդկային բնության մասին հայեցակարգային լուծումները: Բայց քանի որ նա մարդկային բնությունը համարում է սահմանափակ, վերջավոր և արարված իրականություն, իսկ աստվածային բնությունը, հակառակը, ամենակարող և անստեղծ, մարմնավորման ակտի մեջ Քրիստոսի մարդկային հատկանիշներին վերագրվում է «ինքնուրույն սուբյեկտի» կարգավիճակ, բայց իր սահմանափակ որակներով: Մյուս կողմից, եպիսկոպոսն առանձնակի շեշտադրում է մարդու ազատության փաստը և դրանով ձևավորում են անտիոքյան քրիստոսաբանության բնորոշ առանձնահատկություններից ևս մեկը: Թեոդորոսը պնդում է, որ եթե Հիսուսն ընտրության ազատություն չունենար և չգործեր իբրև անկախ բարոյական էակ, ապա նրա մարդկային բնությունը պարզապես կդադարեր գոյություն ունենալուց կամ ընդհանրապես կբացակայեր:

Բայց այդ կանխադրույթից աստվածաբանը հանգում է համակարգային ևս մեկ արատավոր եզրակացության՝ պնդելով, որ Քրիստոսի մեջ մարդկային բնությունն օժտված է կատարյալ ազատությամբ, և որ մինչև հարություն ցանկացած պահի նա կարող էր մերժել Աստված Բանի «ներբնակեցումը»: Ուստի միայն Հիսուսի սուբստանցիոնալ մարդկային բնության առկայության դեպքում է հնարավոր իրական մարմնավորումը[10]: Այդ ամենով ակնհայտ է, որ Թեոդորոս Մոպսուեստացու քրիստոսաբանական մոտեցմանը բնորոշ են մի շարք հակասություններ: Մի կողմից նա պնդել է, որ Մարմնավորումը հնարավոր է միայն Աստվածային Շնորհի «բարեհաճության» արդյունքում, իսկ մյուս կողմից փորձել է փաստել, որ Շնորհով մարդուն տրված բարոյական կամ ընտրության ազատության միջոցով մարդը հնարավորություն է ստացել մերժելու Աստվածային Շնորհը:

Անշուշտ պետք է վկայել, որ Թեոդորոսը Ապոլինարին և նրա քրիստոսաբանությունը համարել է հերետիկոսական և իր հայեցակարգում փորձել է

---

[9] Ենթադրվում է նաև, որ Թեոդորոս եպիսկոպոսի կողմից առաջադրված Homo assumptus-ի գաղափարը կարող է լինել Դիոդորոս Տարսոնացու, Եվստաթեոսի կամ Պողոս Սամոսատցու գաղափարական ազդեցության հետևանքը, տե՛ս **Norris R.A.** The Christology of Paul of Samosata. General theological seminary. New York, 1955, p. 84:

[10] Տե՛ս **Greer R.** Theodore of Mopsuestia: exegete and theologian, p. 53:

հիմնավորապես ցույց տալ Ապոլինարի սխալները: Հակադրվելով Ապոլինարին՝ նա գրել է. «Քրիստոս սովորական Աստված կամ սովորական մարդ չէ, այլ ճշմարտապես երկուսի մեջ է՝ լինելով Աստված և մարդ իր բնությամբ»[11]: Ճիշտ է, այդ մոտեցմամբ նա գործնականում հիմնավորել է, որ Քրիստոսի աստվածային կատարյալ բնությունը միավորվել է մարդու անկատար մարմնի հետ, այլ կերպ ասած՝ Քրիստոսը ոչ թե մարդացել է, այլ մարմնավորվել: Այդուհանդերձ անառարկելի է նաև այն, որ Թեոդորոսի քրիստոսաբանությունը որակապես տարբերվում է ապոլինարականությունից, քանի որ նա հանուն աստվածայինի «չի զեղջում» մարդկային բնության որևէ հատկանիշ և Քրիստոսի մեջ հավասարապես ընդունում և կարևորում է մարդու ազատ կամքի գոյությունը:

Լինելով անտիոքյան հակաապոլինարական քրիստոսաբանության ականավոր ներկայացուցիչներից մեկը՝ Թեոդորոս Մոպսուեստացին առանձնակի ուշադրություն է դարձրել Ապոլինար Լաոդիկեցու համակարգին և իր քրիստոսաբանական եզրահանգումներից շատերը կատարել է հենց Ապոլինարի վերլուծական քննադատության արդյունքում: «Ընդդեմ Ապոլինարի» իր հայտնի ու մասամբ պահպանված աշխատության մեջ Թեոդորոսը նշում է, որ Ապոլինարի համար մարմնացյալ Քրիստոսի մեջ մարդկային ազատ կամքի ընդունումն անհնար էր այն պատճառաբանությամբ, որ իբր մարդկային ազատ կամքը կհակադրվի Աստվածային կամքին, և տեղի կունենար «Քրիստոսի երկատում», ինչն անթույլատրելի էր համարում: Թեոդորոս Մոպսուեստացին պնդեց մարդկային բնությանը բնորոշ բոլոր հատկանիշների պահպանման փաստը, քանի որ բնությունների սուբստանցիոնալ առանձնացումը նրա համակարգն օժտում էր տեսական այդ հնարավորությամբ:

Մարդու և մարդկային բնության վերաբերյալ Թեոդորոս Մոպսուեստացու հայեցակարգն առաջին հերթին ուղղված էր «մարդու» պլատոնական ըմբռնման դեմ, որով նա ցանկանում էր, մարդու մասին վերացական պատկերացումները հաղթահարելով, հանգել առավել իրական եզրահանգումների: Այդ հարցում ևս նա ակամա հակադրվեց ալեքսանդրիական քրիստոսաբանությանը, որը մարդկային բնությանն անդրադառնում էր իբրև իրեն բնորոշ համընդհանուր հատկանիշներ ունեցող վերացական իրողության: Անտիոքացիների համար մարդաբանական այդ մոտեցումը բավականին խճողված էր ու կտրված իրականությունից, քանի որ նրանք չէին կարող մտածել «մարդուց»

[11] Մեջբերումն ըստ **McLeod F.G**. Theodore of Mopsuestia, p. 35:

անկախ այլ «մարդու» գոյության մասին: Այս տեսանկյունից Թեոդորոսի քրիստոսաբանական հայեցակարգի մարդաբանական լուծումները կարելի է համարել արիստոտելյան, քանի որ վերջինիս պնդմամբ մարդկությունն իր գոյության հենց առաջին օրվանից հանդես է եկել իբրև օբյեկտիվ իրականություն: Այս կապակցությամբ Թեոդորոսը նշում է. «... իսկապես անհնար է խոսել հիպոստասի մասին առանց պրոսոպոնի»[12]: «Անպրոսոպոն հիպոստասի» վերաբերյալ թեոդորոսյան պնդումն արիստոտելյան ռացիոնալիզմով հագեցած անտիոքյան աստվածաբանության բնորոշ կողմերից մեկն է:

Այլ կերպ ասած Թեոդորոսը գտնում էր, որ ցանկացած իրականություն պետք է ունենա իր ներկայանալի կողմը կամ արտաքին դրսևորումը, ինչը հատկապես լավ է երևում նրա այն պնդման մեջ, որ ֆիզիսը (Physis) չի կարող վերացականորեն գոյություն ունենալ, այլ միայն՝ իրական դրսևորմամբ[13]: Այս հիման վրա էլ նա պնդում է, որ Հիսուս Քրիստոսը պետք է իրական մարդ լինի, իսկ նրա մարդկային բնությունը պետք է ունենա իր հիպոստասային դրսևորումը: Այդ պատճառով էլ Թեոդորոսն անընդունելի է համարում խոսել աստվածացված հիպոստասի մասին, քանի որ Հիսուսի մարդկային բնությունը նրա համար ոչ այլ ինչ էր, քան իրական անհատականություն[14]: Դա է եղել պատճառը, որ նա բազմիցս շեշտել է, թե Աստված Լոգոսն իր բարեհաճությամբ բնակվեց մեզ նման մարդկանցից մեկի՝ Հիսուսի մեջ: Իսկ դրանից հետևում է, որ Հիսուսը ոչ թե «արտաքին դրսևորմամբ մարդ է», այլ իրական մարդ է՝ մարդկային բնությանը բնորոշ կրքերով ու այլ բնութագրիչներով: Այդ կապակցությամբ աստվածաբանը Հիսուսի նկատմամբ աստվածային բարեհաճ վերաբերմունքը մեկնաբանում է հետևյալ կերպ. «Իր բնությամբ լինելով անսահման ու տիեզերական՝ Աստված ներկա է ամենայնի մեջ: Բայց իր բարեհաճությամբ նա առավել մոտ է գտնվում մի քանիսին, քան մյուսներին»[15]: Նրա համոզմամբ աստվածային սուբստանցն այնպիսին է, որ նա չի կարող չգտնվել բոլոր մարդկանց մեջ, սակայն մարդկանց միայն մի որոշ մասն է, որ առավել մոտ գտնվելով Աստծուն՝ արժանանում է բարեհաճ վերաբերմունքի: Այստեղ կարևոր է նկատել, որ Թեոդորոսը, աստվածային ամենազոր սուբստանցի էութենական հատկանիշներից ելնելով, ընդունում է բոլոր մարդկանց

---

[12] De Incarnatione. Migne, PG, vol. 66, p. 981B.

[13] Տե՛ս **Sullivan F. A.** The Christology of Theodore of Mopsuestia. Rome, 1956, p. 203ff:

[14] **Teodore of Mopsuestia**. Catechetical commentary on the Nicene Creed. (ed. Mingana A., Woodbrooke Studies V), p. 73.

[15] **Theodore of Mopsuestia**. On the Incarnation. Book 7, Patrologia Gracea 66; 972/Greek.

մեջ աստվածայինի ներկայությունը, իսկ Հիսուսի պարագայում պնդում է, որ Աստված իր բնությամբ տաճարացել է նրա մեջ և ըստ բնության կազմել է մեկ դեմք (պրոսոպոն)[16]:

Ինչպես արդեն նշվել է, անտիոքյան աստվածաբանության բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ եզրահանգումներ կատարելիս չէին խրախուսվում վերացական գաղափարներն ու հասկացությունները: Ակներև է, որ այդ պնդումը բնորոշ է նաև Թեոդորոս Մոպսուեստացու աստվածաբանական համակարգին, հատկապես դրա մարդաբանական կողմին, քանի որ նա այդ հարցում ոչ միայն մերժում էր վերացական մոտեցումները, այլև նախընտրում էր խոսել որոշակի դեպքերի, մարդկանց և իրադարձությունների մասին, որով էլ ի ցույց էր դնում իր էկզեգետիկական մեթոդի առանձնահատկությունները: Ակնհայտ է, որ Թեոդորոս Մոպսուեստացին մեկնաբանության ալեքսանդրիական այլաբանական մեթոդին հակադրում է անտիոքյան ռացիոնալ-տրամաբանական մեկնաբանական մեթոդը, որն առաջին հայացքից առավել մոտ էր Աստվածաշնչական պատմության ըմբռնմանը, քան Ալեքսանդրիական վերացական և իռացիոնալ ընկալումները: Հենց Թեոդորոս Մոպսուեստացու մարդաբանական մոտեցման առանձնահատկության մեջ է նրա քրիստոսաբանական համակարգի հիմնական խնդիրը:

ФЕОДОР МОПСУЕСТИЙСКИЙ КАК ВИДНЫЙ БОГОСЛОВ АНТИОХИЙСКОЙ ШКОЛЫ

ОГАННЕС ОГАННИСЯН

Эта статья – попытка проанализировать теологию известного богослова Антиохийской школы - Феодора Мопсуестийского. Влияние его идей и мыслей огромно как на богословские школы его эпохи, так и более позднего времени. Антропологический аспект его богословия сыграл важную роль в развитии богословской мысли.

Автор показывает, как антиохийская школа богословия выступает против метода интерпретации александрийской богословской школы. Феодор критикует александрийский подход интерпретации Библии. Автор утверждает, что несмотря на критику богословия Теодора Мопсуестийского, его теология сыграла важную роль в формировании богословия Вселенской христианской церкви.

[16] Տե՛ս նույն տեղում, էջ 976:

Ключевые слова – Феодор Мопсуестийский, христология, Антиохия, природа, сущность, гомоусиус, сотерология, Логос, Благодать.

THEODORE OF MOPSUESTIA, A PROMINENT THEOLOGIAN OF THE ANTIOCH SCHOOL

HOVHANNES HOVHANNISYAN

Hovhannes Hovhannisyan in this article attempts to analyze the theology of Theodore of Mopsuestia, the famous theologian of Antioch. The impact of Theodore of Mopsuestia's theological ideas and thoughts was immense on the theological schools of his time and of all later times. In fact the Christain anthropological aspect of his theology has played an important role in the formation of the theological thought of the Church in general.

Hovhannisyan conveys how the interpretive method of the Alexandrian Theology School opposes the Antioch Theological School. Theodore criticizes the Alexandrian approach of interpreting the Bible. He himself percieves the Bible through the Antioch methodology. Furthermore, Hovhannisyan proves that although Theodore of Mopsuestia's theology was criticized, nevertheless, it has had an important role in forming and defining the theological theology of a universal Christian church.

Key words – Theodore of Mopsuestia, Christology, Antioch, nature, essence, homousius, soterology, Logos, Grace